ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 128-Ա

<<31>> հոկտեմբերի 2024 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՍՊԻՏԱԿԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌՐՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԿԱՏԱՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԱՅՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, 77-րդ հոդվածի 3-րդ մասի, 79-րդ հոդվածի 2-րդ դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն գլխավոր քարտուղարի 2024 թվականի հունիսի 21-ի N 04/31.3/18455-2024 գրությունը և «Սպիտակի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» պետական ոչ առրտրային կազմակերպության և «Անի համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության միջև կնքված 2024 թվականի օգոստոսի 28-ի գույքի նվիրաբերության պայմանագիրը.

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է.

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Սպիտակի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» պետական ոչ առրտրային կազմակերպության կողմից Անի համայնքի «Անի համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը կատարված **3 636 877** /երեք միլիոն վեց հարյուր երեսունվեց հազար ութ հարյուր յոթանասունյոթ/ ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով շարժական և մարզական գույքի նվիրատվությունը, այն համարել համայնքի սեփականություն, ընդգրկել համայնքի սեփականության գույքի ցանկում և անհատույց անժամկետ օգտագործման իրավունքով տրամադրել «Անի համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով նվիրաբերված գույքի ցանկը՝ համաձայն հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Սարիբեկյանին.

ա) <<Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 79-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, սույն որոշման 1-ին կետով նախատեսված նվիրատվության մասին տեղեկատվությունը հրապարակել համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ՝ 11	**դեմ՝ 0**	**ձեռնպահ՝ 0**
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	_____	_____	_____
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	_____	_____	_____
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	_____	_____	_____
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	_____	_____	_____
Ա. ՇԱԲՈՅԱՆ	_____	_____	_____
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	_____	_____	_____
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	_____	_____	_____
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ	_____	_____	_____
Ն. ՍԱՐՈՅԱՆ	_____	_____	_____
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	_____	_____	_____
Մ. ԵՆՈՔՅԱՆ	_____	_____	_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<31>> հոկտեմբերի 2024 թ.
քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԹԻՎ N 128-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ «ԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ

Հ/հ	Հիմնական միջոցի անվանումը, համատոտ բնութագիրը	Չափի միավորը	Քանակը	Համախառն հաշվեկշռային արժեքը	Կուտակված մաշվածությունը	Հաշվեկշռային արժեքը 01.01.2024թ. դրությամբ
1.	Ձյուդոյի տատամի	կոմպ	1	2055962	1284976	770986
2.	Մագլցման պարան	հատ	2	24334	15209	9125
3.	Շվեդական պատ	հատ	3	21666	13541	8125
4.	Ըմբշամարտի գորգ	հատ	1	930000	581250	348750
5.	Ըմբշամարտի գորգ ծածկոցով	Լրա կազմ	1	2289950	286244	2003706
6.	Մարմնամարզական նստարան	հատ	1	39583	4948	34635
7.	Մարմնամարզական ներքնակ	հատ	5	173200	21650	151550
8.	**Ջեռուցման համակարգ /այդ թվում/**	Միավոր		**826667**	**516667**	**310000**
8.1	Ջեռուցման մարտկոց	հատ	160	520000	*325000*	*195000*
8.2	Ջեռուցման կաթսա Մերկուրի	հատ	1	111667	*69792*	*41875*
8.3	Ջեռուցման կաթսա Վալման	հատ	1	150000	*93750*	*56250*
8.4	Ջեռուցման խողովակ	մետր	120	45000	*28125*	*16875*
ԸՆԴԱՄԵՆԸ՝				**6 361 362**	**2 724 485**	**3 636 877**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ